Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ԿՐԹԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Ս.Վ.
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Երևան, Տիգրան Մեծի 17
E-mail: barkhudaryan.s@mail.ru

Հոդվածում ներկայացված են կրթական ոլորտում իրավական հարաբերությունների դրսևորման բովանդակությունը, այն ընդգրկում է մանկավարժների և սովորողների համալիր իրավունքները և պարտականությունները, որոնք որոշվում են հասարակական-քաղաքական, սոցիալ-բարոյական գործոններով և կրում են պատմականորեն զարգացող և փոփոխվող բնույթ: Հիմնավորվում է կրթության որակի ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև կրթական գործընթացի կազմակերպման, կրթական ծրագրերի մշակման, հաստատման և մի շարք այլ իրավասություններ: Առաջարկվում են կրթական իրավահարաբերությունների տարանջատման չափանիշները:

Բանալի բառեր. *կրթական իրավահարաբերություններ, կրթական իրավունք, կրթական հաստատություն, կրթության որակ, իրավունքներ և պարտականություններ:*

Ներկայացված է խմբագրություն 19.04.2018

Կրթական իրավահարաբերությունների բովանդակության հետազոտման հիմք է համարվում հասարակական հարաբերությունների ուսումնասիրումը, քանի որ իրավահարաբերությունը իրենից ներկայացնում է իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների տեսակ կամ ձև: Կրթական իրավահարաբերությունները պայմանավորված են գիտելիքներ ստանալու և փոխանցելու անձնական և հասարակական պահանջմունքներով, որն անհրաժեշտ է մարդուն կյանքում ինքնաիրագործման և ինքնահաստատման համար: Դրանով է բացատրվում գիտելիքների և տարբեր կենսական անհրաժեշտ կարողությունների և հմտությունների՝ մի սերնդից մյուսին փոխանցելու անհրաժեշտ բնույթը, որի շնորհիվ դեռևս հին ժամանակներից իրականացվում է սերունդների կապը և ապահովվում է հասարակական առաջընթացը [1]: Իրավական կրթական հարաբերությունները ընդհանուր ձևով և ամբողջովին արտացոլում են հարաբերությունների բովանդակությունը, որը ձևավորվում է կրթության ոլորտում: Առավել ցայտուն իրավական կրթական հարաբերությունների պայմանավորվածությունը սոցիալական հարաբերությունների հետ դրսևորվում է կրթական իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների ու պարտականությունների համակարգում, ինչպես նաև իրավական նորմերի համակցության մեջ՝ ամրագրելով այդ հարաբերությունների մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների կատարման կարգը և իրագործման գործընթացը [2, էջ 56]:

Կրթական իրավահարաբերությունները, որպես կանոն, ունեն գիտակցական – կամային բնույթ։ Քաղաքացու՝ կրթություն ստանալու իրավունքը չի կարող իրականացվել առանց համապատասխան իրավահարաբերությունների իրականացման։ Հասարակական հարաբերությունների մասնակիցներ դառնալով՝ իրավահարաբերության մասնակիցները ձեռք են բերում որոշակի իրավունքներ և պարտականություններ՝ նպատակ ունենալով բարձրացնելու իրենց կրթական մակարդակը։ Եթե իրավահարաբերությունները առաջանում են հենց մասնակիցների կամքով և ցանկությամբ, ապա դա կրթական հարաբերությունների մասնակիցներին չի զրկում իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար համապատասխան իրավասու մարմիններին դիմելու հնարավորությունից։ Իսկ իրավունքների խախտման և պարտականությունների չկատարման համար իրավաբանական պատասխանատվություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ իրավահարաբերության սուբյեկտը օրենքով սահմանված կարգով կճանաչվի իրավախախտ։

Կրթության բնագավառի բազմաբնույթ լինելու վերաբերյալ իր ուրույն կարծիքն է արտահայտել Ա. Դորոխովան՝ նշելով, որ կրթության բնագավառում կարևոր դերակատարություն ունեն մանկավարժական հարաբերությունները,որոնք ենթադրում են սուբյեկտների իրավական հավասարություն։ Նա եկել է այն եզրահանգման, որ քաղաքացիների մասնակցությամբ վարչա-իրավական հարաբերությունները համարվում են կրթական հարաբերությունների հիմնական, որոշիչ տեսակը, իսկ դրա կարգավորման մեթոդը, թեկուզ և մասնակի, տարբերվում է ավանդական վարչա-իրավական մեթոդից, որն իրեն բնորոշ իշխանական-ենթակայական հատկանիշներով էական ազդեցություն ուներ ժողովրդական կրթության բոլոր հարաբերությունների կարգավորման հարցում [3]։

20-րդ դարի 90-ական թվականներից կրթության բնագավառում հարաբերությունների յուրահատկության դրսևորումը հնարավորություն տվեց հրաժարվելու կրթական հարաբերությունների վարչաիրավական դրսևորումներից, և կրթական հարաբերությունները դիտարկվեցին որպես իրավահարաբերություններ՝ ինքնուրույն ճյուղային նշանակությամբ։ Ներկայումս իրավագետների մեծ մասը հիմնականում համամիտ են այդ տեսակետին՝ կատարելով որոշ լրացումներ։ Այսպես, Վ. Սպասսկայան առաջարկում է ի նկատի ունենալ, որ կրթական հարաբերությունների առարկա կարողություններ և հմտություններ, այլև կարող են հանդիսանալ ոչ միայն որաշակի ժամանակից մարդու համար այնպիսի անհրաժեշտ որակներ, ինչպիսիք են ինքնուրույնությունը, անձնական պատասխանատվությունը, նախաձեռնությունը, մտածողության ճկունությունը, շփվելու ընդունակությունը, ցանկացած իրավիճակին հարմարվելը, տեղեկատվության հետ արդյունավետ աշխատելու ընդունակությունը, որը մանկավարժական գործունեության մեջ ընդունված է անվանել «առանցքային բաղադրիչներ» [4]։

Այս հարցում նմանատիպ տեսակետ ունի նաև Վ. Շկատուլան։ Նա դիտարկում է ուսումնական պարապմունքների գործընթացի (ուսուցման ձևերու պարապմունքների տեսակներ, ուսուցման ու դաստիարակության մեթոդներ, գիտելիքների իմաստավորման և ընդհանրացման կազմակերպում, գիտական հասկացությունների ձևավորում) հետ կապված մանկավարժական գործունեությունը՝ կարևորելով կրթական հարաբերությունների բազմազանությունը [5]։

Հայտնի է, որ սուբյեկտի միանձնյա իրականացվող գործունեությունը հարաբերություն չի կարող առաջացնել, քանի որ բացակայում է իրավահարաբերության

կարևորագույն նախադրյալներից մեկը՝ մեկ ուրիշի հետ շփման մեջ մտնելու հարաբերությունը: Ինչպես նշում է Ա. Եսայանը, մանկավարժական գործընթացի նախագծման և կանխագուշակման հետ կապված միանձնյա՝ առանց այլ անձանց մասնակցության իրականացվող մանակավարժի գործունեությունը չի կարող համարվել կրթական (մանկավարժական հարաբերություն): Այս գործունեության արդյունքներն են քաղաքացիական իրավունքի նորմերով պաշտպանվող մտավոր աշխատանքի արդյունքները: Մանկավարժի գործունեությունը կրթական (մանկավարժական) հարաբերություններում իրականացվում է միայն այն դեպքում, երբ նա մասնակցում է մանկավարժական գործընթացին և իրականացնում է սովորողների ուսուցման և դաստիարակության կոնկրետ ակտեր, կամ էլ փոխազդեցության մեջ է գտնվում ուսումնական գործունեության այլ մասնակիցների հետ [6, էջ 23]:

Կրթական իրավունքը համալիր իրավունքի ճյուղ ճանաչելով՝ անհրաժեշտություն է առաջանում պարզելու նրան համապատասխանող իրավահարաբերությունների բնույթը և տեսակները: Ներկայումս «կրթական իրավահարաբերություններ» եզրույթը բավարար չափով հիմնավորվել է գիտական գրականության մեջ՝օրենսդրության ուսումնասիրման հետ կապված: Դրա հետ մեկտեղ գործող կրթական օրենսդրությունում չի տրվել կրթական հարաբերությունների հստակ սահմանումը, իսկ գրականության մեջ առաջարկվում է տարանջատել «կրթական հարաբերություններ» և «իրավահարաբերություններ կրթության ոլորտում» հասկացությունները: Կարծում ենք, որ տվյալ հարաբերությունները չպետք է հակադրել միմյանց: Իրավահահարաբերությունները կրթության բնագավառում առավել լայն հասկացություն են. դրանք ընդգրկում են ցանկացած իրավահարաբերություն՝ ապահովելով կրթական գործընթացների կազմակերպումը և իրականացումը: Այդ իմաստով կրթական իրավահարաբերությունները նույնպես վերաբերում են իրավահարաբերություններին՝ կրթության ոլորտում իրենցից ներկայացնելով որպես նրա հիմնական տարատեսակ: Բայց եթե կրթական իրավահարաբերությունների նպատակը համարվում է սովորողների կողմից կրթական ծրագրերի բովանդակության յուրացումը, ապա կրթության բնագավառում այլ իրավահարաբերությունների նպատակը, որը կարելի է պայմանականորեն անվանել իրավահարաբերություններ կապված կրթական հարաբերությունների հետ, համարվում է քաղաքացիների իրավունքի իրագործման պայմանների ստեղծումը կրթության բնագավառում: Դրանով իսկ դժվար է ընդունել այն տեսակետը, որ իրավահարաբերությունները կրթության ոլորտում կրում են համալիր բնույթ [7]: Այստեղ համալիր են համարվում ոչ թե իրավահարաբերությունները կրթության բնագավառում, այլ համապատասխան նորմատիվ իրավական ակտերը, որոնք ամրագրում են իրավունքի տարբեր ճյուղերի նորմերը: Այդ իմաստով կրթական իրավահարաբերությունները թեկուզ և փոխկապակցված են, օրինակ, վարչական կամ աշխատանքային իրավահարաբերությունների հետ, սակայն միմյանց հետ չեն կարող միավորվել որպես մի համալիր իրավահարաբերություն:

Իրավունքը կրթության ոլորտում կարգավորում է հասարակական այն հարաբերությունները, որոնք արտացոլում են տվյալ հարաբերությունների բոլոր մասնակիցների առավել ցայտուն շահերը: Այդ դերում կարող են հանդես գալ սովորողները, կրթական հիմնարկները, պետությունը, հասարակական կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք ընդհանուր շահեր են ներկայացնում: Կրթական հարաբերությունները նախ և առաջ կարելի է բնութագրել որպես եռակողմ հարաբերություններ: Դրա անմիջական մասնակիցներ են համարվում կրթական հիմնարկները, սովորողները,

մանկավարժական աշխատողները, որոնց անմիջական մասնակցությամբ է հնարավոր կրթական հարաբերությունների առաջացումը և հետագա գործունեությունը:

Կրթական հարաբերությունների չորրորդ մասնակիցը՝ ծնողը (կամ այլ օրինական ներկայացուցիչ) այդ հարաբերություններում չի համարվում ինքնուրույն անձ և հանդես է գալիս այնքանով, որքանով սովորողները դեռևս անընդունակ են ձևակերպելու և արտահայտելու իրենց իրական կամքը: Ծնողը ճանաչվում է կրթական հարաբերության սուբյեկտ միայն իր անչափահաս երեխայի իրավունքների ու պարտականությունների իրականացման մասով: Կրթական իրավահարաբերություններում ծնողի գործառույթը երեխաներին ուսման նպատակներն ու խնդիրները բացատրելն է, ինչպես նաև կարողությունների չափով օգնության ցուցաբերումը կրթական ծրագրերը յուրացնելու գործում: Դրա համար նրանք պետք է սերտ կապի մեջ լինեն կրթական գործընթացը անմիջականորեն իրականացնող մանկավարժների հետ և նրանցից տեղեկատվություն ստանան իրենց երեխաների առաջադիմության և վարքի վերաբերյալ: Ծնողի՝ որպես կրթական գործընթացի մասնակիցի, նպատակաուղղված վարքագիծը ենթադրում է, որ նա պետք է օժանդակի իր երեխային՝ կրթական գործընթացի նկատմամբ գիտակցված վերաբերմունք ցուցաբերելու համար: «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ծնողներին (օրինական այլ ներկայացուցիչներին) իրավունք է տալիս ընտրելու միայն կրթության ձևը, կրթական հաստատությունը, պաշտպանելու սովորողի օրինական իրավունքներն ու հետաքրքրությունները: Ուսումնառության մնացած հարցերում սուբյեկտ է համարվում սովորող երեխան: Հասնելով չափահասության տարիքի՝ սովորողը դառնում է կրթական հարաբերության լիիրավ ու ինքնուրույն սուբյեկտ, իսկ նրա ծնողը (օրինական այլ ներկայացուցիչ) պահպանում է կրթական հարաբերությունների մասնակցի կարգավիճակը միայն այն դեպքում, երբ հենց ինքն է ընդգրկվում այդպիսի հարաբերությունների մեջ՝ ընդհանուր կամ մասնագիտական կրթություն ստանալու, ինչպես նաև որակավորման բարձրացման նպատակով [6, էջ 247]:

Որպես կրթական հարաբերությունների ինքնուրույն մասնակից հանդես է գալիս նաև սովորողների կոլեկտիվը: Կոլեկտիվի դերը նրա անդամի վարքի ձևավորման գործում հայտնի է: Դասարանի խմբի անդամ դառնալով՝ սովորողը պարտավոր է հաշվի առնել համապատասխան ուսումնական հաստատության կոլեկտիվում գործող կանոններն ու նորմերը: Որակյալ կրթություն ապահովելու պարտականությունը առաջին հերթին կրում է կրթական հաստատությունը: Կրթության մասին ՀՀ օրենքի [8] 12-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ ուսումնական հաստատության տնօրենը պատասխանատու է հանրակրթության պետական կրթական և առարկայական չափորոշիչներին համապատասխան՝ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սովորողների առողջության պահպանման, կադրերի ընտրության, աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար:

Որպես կառավարման մարմին՝ կրթական հաստատությունը իրավունք ունի ինքնուրույն իրականացնել կրթական գործընթացի կազմակերպումը, ապահովել, կատարելագործել մեթոդական կողմը, մշակել և հաստատել կրթական ծրագրեր և ուսումնական պլաններ, ուսումնական դասընթացների աշխատանքային ծրագրեր: Սեփական ֆինանսական միջոցների սահմաններում կրթական հիմնարկը իրավասու է լուծելու կրթական գործընթացի նյութա-տեխնիկական ապահովման հարցերը և շինությունների սարքավորումների զինումը՝ պետական նորմերի պահանջներին համապատասխան: Գործատուի կարգավիճակով կրթական

հաստատությունը նաև իրավունք ունի անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մանկավարժական կադրերի ընտրության, տեղաբաշխման, որակավորման բարձրացման համար: Կրթական հաստատության հիմնական իրավասությունները կադրային քաղաքականության ոլորտում ներառում է հաստիքացուցակի սահմանումը, պաշտոնական պարտականությունների տեղաբաշխումը, աշխատողների աշխատավարձի և պաշտոնական դրույքաչափերի հետ կապված հարցերը սեփական ֆինանսական միջոցների սահմաններում և այլն: Կրթական հիմնարկների իրավասությունը վարչական, քաղաքացիական և աշխատանքային իրավունքի ոլորտում իրականացվում է այնքանով, որքանով դա նպաստում է կրթական գործընթացի պատշաճ իրականացմանը և սովորողների որակյալ կրթություն ստանալու սահմանադրական իրավունք իրագործմանը [2, էջ 58]:

Կրթական հաստատությունները՝ որպես կառավարման մարմին, իրավաբանական անձ և գործատու, օգտագործում են իրենց իրավունքները և միջոցներ են ստեղծում մասնակցություն ունենալու կրթական իրավահարաբերություններում՝ ընդունակ լինելով պատշաճ ձևով իրականացնելու իրենց վրա օրենքով դրված պարտականությունները Այսպիսով, կրթական հիմնարկը մասնակցում է կրթական հարաբերություններին որպես պարտավորվող կողմ՝ գործելով առաջին հերթին սովորողների շահերից: Պարտավորությունների ոչ պատշաճ կատարման համար կրթական հաստատությունը իրավաբանական պատասխանատվություն է կրում պետական հավատագրումից զրկվելու տեսքով՝ ոչ որակյալ կրթություն տալու համար (Կրթության մասին ՀՀ օրենք 43 հոդվ. 5-րդ կետ): Կրթական հարաբերություններում մանկավարժական աշխատողները հանդես են գալիս որպես մասնագետներ. նրանք մասնակցում են կրթական գործընթացին՝ սովորողների հետ պարապմունքներ անցկացնելով: ՀՀ կրթության մասին օրենսդրությունը ամրագրում է իրավունքների և ազատությունների որոշակի շրջանակ, որով արտացոլվում է մանկավարժական աշխատողների կողմից իրենց մասնագիտական գիտելիքների, հմտությունների, կարողությունների իրագործումը: «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28 հոդվ. 2-րդ կետի համաձայն՝ բուհական պրոֆեսորա-դասախոսական կազմը, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ազատ է դասավանդվող ուսումնական նյութի շարադրման և դասավանդման մեթոդների ընտրության մեջ, իսկ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի [9] 27 հոդվ. 7-րդ կետի համաձայն՝ ընտրելու և կիրառելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ՝ իր ընտրությամբ օգտագործելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորած դասագրքեր և ուսուցողական նյութեր, ձեռնարկներ, ինչպես նաև սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդներ: Միաժամանակ օրենքը պարտադրում է նրանց չխախտել կրթական հաստատության կանոնադրությունը՝ արգելելով սովորողներին ներգրավել աշխատանքի մեջ՝ առանց նրանց ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնության, արգելվում է նաև սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման մեթոդների կիրառումը (Կրթության մասին ՀՀ օրենք 49 հոդվ. 2 մաս):

Այսպիսով, նկատի ունենալով «Կրթության մասին» ՀՀ օրենքի համապատասխամն հոդվածների դրույթները, կարելի է փաստել, որ կրթական հարաբերությունների նորմատիվ իրավական կարգավորման արդյունքում, իրավական ոլորտում առաջ է գալիս նոր երևույթ՝ կրթական իրավահարաբերություններ, որը

բնութագրվում է միասնականությամբ, ամբողջականությամբ և մի շարք յուրահատուկ հատկանիշներով, որոնք վերաբերում են ինքնուրույն համակարգային կրթությանը:

Կրթական իրավական հարաբերությունների միասնականությունը բնորոշվում է նրա հիմքով՝ կրթական հարաբերություններով՝ որպես սոցիալական ոլորտի երևույթ:

Կրթական հարաբերությունների միասնականությունը պայմանավորված է նրանով, որ այն գործում է սոցիալական կեցության մի ոլորտում՝ կրթական ոլորտում և արտահայտում է միայն իրեն բնորոշ առանձնահատուկ գծեր, հատկանիշներ: Կրթական հարաբերությունները՝ որպես միասնական երևույթ և հիմնական բաղադրիչ, իրենց մեջ ընդգրկում են այն հիմնական տարրերը, որոնց վրա կառուցվում է ցանկացած հասարակական հարաբերություն՝ սուբյեկտ, օբյեկտ, սուբյեկտիվ իրավունքներ և իրավաբանական պարտականություններ:Կրթական իրավական հարաբերությունները համարվում են միասնական, քանի որ առաջին հերթին այդպիսին համարվում է նրա հիմքը՝ կրթական սոցիալական հարաբերությունները, երկրորդ՝ այդ հիմքը միակն է հանդիսանում, իսկ վարչական, աշխատանքային, քաղաքացիական հարաբերությունները, գործելով կրթության ոլորտում, միջնորդավորվում են իրենց համապատասխան իրավական նորմերով և ընկած են կրթական հարաբերությունների բովանդակությունից դուրս:

Ելնելով վերոնշվածից՝ կարելի է ընգծել այն առանձնահատկությունները, որոնցով կրթական իրավահարաբերությունները պետք է առանձնացնել այլ իրավահարաբերությունների համակարգից՝

1.Մանկավարժի անմիջական մասնակցությունը կրթական հարաբերություններին, որը պայմանավորված է կրթական հաստատության հետ ունեցած աշխատանքային պայմանագրի բովանդակությամբ:

2.Կրթական հաստատությունների և մանկավարժների պարտականությունների կատարումը ըստ համապատասխան իրավասությունների:

3.Կրթական հաստատությունների կողմից իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարելու և որակյալ կրթություն չապահովելու համար սովորողների՝ հայց ներկայացնելու իրավունքից զրկված լինելը:

4.Սովորողների կողմից առանց հարգելի պատճառների ուսումնական պարապմունքները դադարեցնելու համար իրավաբանական պատասխանատվության բացակայությունը:

Սովորողների կրթություն ստանալու իրավունքը, անշուշտ, հարաբերվում է կրթական հաստատությունների և մանկավարժական աշխատողների պարտականությունների հետ. դրանք են՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ բավարարելու սովորողների ընդհանուր կամ մասնագիտական գիտելիքների պահանջմունքները: Մանկավարժները միաժամանակ կրում են սովորողների որակյալ կրթության ապահովման, մասնագիտական վարպետության մակարդակի մշտական բարձրացման, մանկավարժական գործընթացում ուսուցման և դաստիարակության, ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման պարտականություններ: Մանկավարժը, օգտագործելով դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաներ, հնարներ և մեթոդներ, իրականացնում է սովորողների կրթությունն ու դաստիարակությունը: Մանկավարժի հետ շփման ընթացքում սովորողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ, տիրապետում հմտությունների, ձևավորվում որպես անհատականություն: Նմանատիպ շփման գործընթացում մանկավարժը և սովորողները կրում են որոշակի իրավունքներ և պարտականություններ: ԲՈՒՀ-ի սովորողները պարտավոր են յուրացնել ուսումնական ծրագրերը, բարեխղճորեն կատարել

մանկավարժի հանձնարարությունները, մասնակից լինելդասախոսություններին և գործնական պարապմունքներին, օգտվել գրադարաններից, էլեկտրոնային տարատեսակ կայքերից և այլն: Սակայն կարևոր է ընգծել, որ կրթական հաստատությունների և մանկավարժական աշխատողների ամենաբեղնավոր գործունեությունն անգամ դրականարդյունքներ չի կարող տալ, եթե հենց իրենք՝ սովորողները, ակտիվ մասնակցություն չցուցաբերեն ուսումնական գործընթացքում, բարեխղճորեն չկատարեն իրենց պարտականությունները՝ գիտելիքներ ձեռք բերելու առումով, սահմանված ժամկետներում չկատարեն ուսումնական պլանով և կրթական ծրագրերով նախատեսված պարապմունքների բոլոր ձևերը: Սովորողները միայն կամքի և ազատության առկայության դեպքում, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ ակտիվ, դրական գործողություններով կարող են տիրապետել գիտելիքներին,մշակել կարողություններ և հմտություններ, ձևավորել անձնական որակներ և զարգացնել ընդունակությունները: Կրթական ծրագրի յուրացման փաստը, պլանավորված արդյունքին հասնելը, ինչպես նաև ստացված կրթության որակը ևս կարող ենհաստատվել սովորողների կողմից: Տվյալ գործողությունները կատարվում են իրավասու սուբյեկտի կողմից ոչ թե հօգուտ պարտավորվող կողմի, այլև իր օգտին, քանի որ ճիշտ պլանավորված գործողությունները թույլ են տալիս կրթական հարաբերություններում բավարարել իր սեփական շահերը: Դրա հետ մեկտեղ կրթության գործընթացում ակտիվ դրական գործողություններից հրաժարվելը հավասարազոր է կրթություն չստանալուն և կրթական հարաբերություններում նպատակին չհասնելուն: Իրավասու սուբյեկտի կողմից իր սեփական գործողություններով ամբողջ գործընթացի ընթացքում կրթական ծրագրի յուրացումը անհրաժեշտ է և ունի օբյեկտիվ բնույթ: Ինչպես նշում է Վ.Սիրիխը, կրթական հարաբերությունների օբյեկտ հանդիսացող որակյալ կրթությանը կարելի է հասնել սովորողների և մանկավարժական աշխատողների իրավունքների և պարտականությունների զուգորդմամբ և փոխհամաձայնեցմամբ [2, էջ 67]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրթական հարաբերությունները, ըստ էության, հատուկ իրավաբանական կառուցվածք է, որի օբյեկտ է համարվում յուրահատուկ սոցիալական բարիքը՝ իր մեջ ընդգրկելով համակարգված գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, որոնք ձեռք են բերվումսովորողների կողմից կրթության և դաստիարակման ընթացքում: Կրթական հարաբերությունների բովանդակությունն է կազմում կրթական հաստատությունների, ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունեցող մանկավարժների և սովորողների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, իսկ պատշաճ մակարդակի կրթությունն իրականացվում է կրթական ծրագրով՝ պետական կրթական չափորոշիչներով նախատեսված պահանջներին համապատասխան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. В.В. Спасская. Содержание образовательного правоотношения. Право и образование N6, 2006., с 2.
2. В.М. Сырых. Введение в теорию образовательного права. М., 2002, 342с.
3. Г.А. Дорохова. Законодательство о народном образовании. М.,1958., с.10-16
4. В.В. Спасская. К вопросу о специфике образовательных отношений. Право и образование 2005., N2, с.89
5. В.И. Шкатулла. Образовательное право. Учебник для вузов. Изд-во НОРМА-ИНФРА.М) М. 2001., с. 27-33
6. Ա. Եսայան Կրթության իրավունք: Ուսումնական ձեռնարկ. Երևան ՏիգրանՄեծ, 2011թ. 720 էջ
7. Т.Н.Трошкина / Закон 2007, N4 . с.60-61
8. Կրթության մասին ՀՀ օրենք: Ընդունված է 14.04 .1999թ.
9. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք: Ընդունված է 10.07. 2009թ..

РЕЗЮМЕ

СОДЕРЖАНИЕ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРАВООТНОШЕНИЙ И ЕГО ОСОБЕННОСТИ

С.В.БАРХУДАРЯН

В статье представлены содержание проявления правовых отношений в сфере образования, в котором включены права и обязанности педагогогов и учащихся, которые определяются обшественно-политическими, социально-моральными факторами и носят исторически развивающийся характер. Обосновывается обеспечение качества образования, а также правомочность осуществлять организацию учебного процесса, разработки и утверждения образовательных программ и ряд других полномочий. Предлагаются критерий разграничения образовательных правоотношений в сфере образования.

SUMMARY

THE CONTENT OF EDUCATIONAL LEGAL RELATIONS AND ITS PECULARITIES

BARKHUDARYAN S.V.

The content of the manifestation of legal relationships in educational sphere has been represented in the article. It contains the complex of pedagogues' and students' rights and responsibilities, which are determined with social-political, social-moral factors and have historically developing and changing nature. The necessity of providing educational quality, as well as the rights of organizing educational process, designing and approving educational curricula have been justified. The criteria of differentiation of educational legal relationships are suggested.